25.880

ԳՅՈՒՂԱՏԻ.

ՈՒԺԵՂԱՑՐՈՒ ԿՈՄՊԵՐԱՑԻԱՆ

Պ. ՔՈԼՅԱՆ

15 JAN 2010
334
Ֆ-74
300
ՀՏԵՑ-ՖՈ
1003
2731

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

Դ. ՖՈԼՅԱՆ

ԳՅՈՒՂԱՑԻ! ՈՒԺԵՂԱՑՐՈՒ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. ՅԵՐԵՎԱՆԻ ԲԱՂ-ԳԱՎԳՈՐԾԿՈՄԻ

1925 թ. ՅԵՐԵՎԱՆ

6 SEP 2013
25.880

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրաբեպ. № 1750 Պատ. № 1956 Տիրաժ 5000



ԳՅՈՒՂԱՑԻ, ՈՒԺԵՂԱՑՐՈՒ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

Ընկեր գյուղացի, լսիր թե ինչպես պետք է մեղադրեմ քեզ ու հաստատեմ, վոր դու մեծ մեղք ունես։

Միևնույն է, թե ով ես դու, չարքաշ աշխատավոր, բատրակ, կամ նույնիսկ ամենքի կողմից հարգված գյուղխորհրդի արդամ, թեկուզ գյուղի ամենապատվավոր մարդն ես դու, գյուղացիների կողմից ընտրված փոխադարձ ոգնության կոմիտեյի անդամ, հարգելի ծերունի, թե առույգ յերիտասարդ, միևնույն է, դու հանցավոր ես, յեթե մինչև որս չես անդամագրվել կոոպերատիվին, յեթե

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՆԴԱՄ ՉԵՍ։

Դու հանցավոր ես, յեթե ձեր, կամ ձեր հարևան, ընդամենը մի քանի վերստի վրա գրանվող գյուղում կա կոոպերատիվ և դու չես

անդամագրվել նրան։ Եթե այդպես է, ուրեմն դու մեծ հանցանք ես գործել՝

Նախ յեվ առաջ հենց ինքդ քո դեմ,
հետո քո հարեվանի, քո ընկերոջ դեմ,
հեղափոխության դեմ,
յեվ քո մանր յերեխաների, մեր մատաղ
սերնդի դեմ, վորոնց ապագայի համար

է, վոր այսքան հոգսեր ու ցավեր ենք քաշում։ և դու, յեթե կոոպերատիվի անդամ չես, ուրեմն վոչինչ չես արել, վոր եդ ապագան պայծառ ու լավ լինի։

Շատ վատ ես արել։

ԴՈՒ ՀԱՆՑԱՎՈՐ ԵՍ։

Զարմանում ես։

Չե՞ս հավատում ինձ։ Լավ։ Ինձ չես հավատում, ընկեր Լենին լսիր—տես ինչ է ասում կոոպերացիայի մասին։ Ընկեր Լենինին հո հավատում ես—նրան ամբողջ աշխարհի գյուղացիներն են հավատում, նրա անունովը, նրա գերեզմանովը յերդվում, ասած խոսքերը անգիր են անում, նրա ցույց տված ճանապարհովն են գնում ու նրա տված ավանդները պինդ պահում են։

Նրան հո հավատում ես։

Նրան լսիր ու շտապիր սխալդ ուղղել։

Ընկեր Լենինը ասում է, վոր մենք մեր ա-

նելիքների կեսը կատարել ենք, բայց դեռ կեսը մնում է։

Առաջին կեսը, են վոր կատարել ենք, դա հեղափոխությունն եր, յերբ բանվորն ու գյուղացին ձեռք-ձեռքի տված՝ վոտքի յելան, զենք առան ձեռները ու խփեցին իրանց թշնամուն, բուրժուին, գործարանատերին, կալվածատերին—իշխանությունը նրանց ձեռքից, այսինքն գուբերնատորների, պրիստավների, քյոխվանների ձեռքից խլեցին։

Իշխանությունը խլեցին ու սեփական բանվորա-գյուղացիական իշխանություն ստեղծեցին, խորհրդային իշխանություն, հարազատ, արդար, քյասիբի իշխանություն։

Եդ մեկ։

Հետո, լավ ես հիշում յերևի, թե ինչպես եդ կռվով, արյունով ձեռք բերած մեր իշխանության վրա հարձակվեցին, հազար ու մի շուն ու գել, սպիտակ բանակներ, գեներալների, կնյազների, բուժույների վարձկաններ—սկսվեց արյունահեղ քաղաքացիական կռիվը։ և

Բանվորն ու գյուղացին, Լենինի խոսքը լսեցին, Կոմունիստական կուսակցության հետևից գնացին ու մի ենպես հզոր Կարմիր Բանակ ստեղծեցին ու դուրս բերին սպիտակների

դեմ, վոր մեր յերկրում սպիտակների իզն ու թոզը չմնաց։

Յեվ լավ ես հիշում, թե վորքան թարդ նստեց մեր իշխանության պաշտպանելը, թե վորքան արյուն թափեցինք, թե վորքան զոհեր տվեցին մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները։

Ես ել միտդ պահիր։

Հետո՝ եղքան թանդ գնով ձեռք բերած ու պաշտպանած իշխանությունը մենք սկսեցինք ամրացնել։ Թե ինչպե՞ս։ Ես դու ինձանից լավ գիտես։

Հիշում ես չե, ընկեր Լենինը կոչ արավ, թե հիմի կռիվը վերջացավ, ռազմական ճակատ չկա՝, բայց կա մի ուրիշ ճակատ, դա տնտեսական ճակատն է, վորտեղ նոր կռիվ պետք է սկսենք։ Կռիվ աղքատության, ավերածության, սովի և խավարի դեմ.

Ու յերկրի բանվորն ու գյուղացին ուժերն ու յեռանդը կրկնապատկեցին ու դիմեցին խաղաղ շինարարական աշխատանքի։

Հիշում ես, մի քանի տարի առաջ սոված ու մերկ կոտորվում եյինք։ Դպրոցները փակված, հիվանդանոցները ավերված, ճանապարհներն ու առուները քարուքանդ... Մարդ սկի չի յել ուզում մտաբերել են որերը։

Հիմի են չենք։ Հիմի անհամեմատ լավ ենք։ Քո շորհիվ է, ընկեր Ջան, քո և քո յեղբայր բանվորի շնորհիվ։

Քո գութանի ու բանվորի դազգյահի, քո և նրա անդուլ աշխատանքի շնորհիվ է, վոր յերկիրը սովից ու մերկությունից, լաց ու կոծից փրկվեց։

Ահա, սա է մեր անելիքների են կեսը, վոր ընկեր Լենինը ասում է, մենք պատվով կատարել ենք։

Բայց չմոռանաս, միայն կեսն է, դեռ մեծ կեսը մնում է։

Եդ ի՞նչն է, վոր չենք արել և պետք է անենք։

Ընկեր Լենինը եդ հարցրին պատասխան է տվել, ու մեզ ուղիղ ճանապարհ ցույց տվել։

Մեզ մնում է արդյունաբերությունը, այսինքն գավոդներն ու ֆաբրիկաները կարգի գցել, բարձրացնել նրանց աշխատանքը, նորերը սարքել, շատացնել նրանց թիվը, ու ենպես անել, վոր նրանց տված ապրանքը լավը լինի յեվ եժան նստի։

Եդպես է ասել ընկեր Լենինը։

Եդ մեկ։

Հետո, հարկավոր է, վոր եդ ֆաբրիկներից և գավոդներից ստացած ապրանքը բանվորին

ու գյուղացուն հանի վոչ թե մանավոր չարչու, սպեկուլյանտի միջոցով, այլ—

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ—

Վոր ապրանքի վրա մեկին յերկու գին չը դրվի ու գյուղացու հալալ աշխատանքը չարչու ձիրը չմտնի։

Կոոպերացիան կարելի յե ենպես ուժեղացնել, վոր նա չարչուն դուրս քշի գյուղից և գյուղացուն լավ և եժան ապրանք տա։ Միաժամանակ, ասել ե ընկեր Լենինը, կոոպերացիան կարող ե գյուղացու տնտեսությունը բարձրացնել, չքավոր գյուղացիության ցիր ու ցան յեղած ուժերը միացնել ու մեծ ուժեղ տնտեսություն կազմակերպել։ Կոոպերացիան կսովորեցնի ընկերովի աշխատել և դրանով հիմք կդնի սոցիալիզմին, այսինքն՝ հավասարության և յեղբայրության են կարմիր որերին, են պայծառ աշխարհին, վորին ամբողջ աշխատավոր մարդկությունը ձգտում ե և վորի համար մենք այսքան զոհեր ենք տվել, այսքան արյուն ու աշխատանք թափել։ Այպես ե ասել ընկեր Լենինը։

Ուրեմն լավ հիշիր. հեղափոխության կես ճանապարհը անցել ենք, կեսն ե մնում։ Մինթե եդ կիսումը կանգ պետք ե առնենք։ Մինթե մեր տված զոհերը. մեր թափած քրտինքը ի-զուր տեղը պիտի կորչեն։ Մինթե պիտի նահանջենք ու տեղ տանք են անցած կորած սև որերին։ Վ.-չ։

Մեր յերկրի բանվորն ու գյուղացին հետ դառնալու միտք չունեն, և վոչ ել դժվարություններից, աշխատանքից, նոր պայքարից են վախենում։

Մեր յերկրի բանվորն ու գյուղացին խոսք են տվել ընկեր Լենին, յերբ նա կենդանի յե յեղել, յերդվել են նրա գերեզմանի վրա, յերբ նա մեռել ե, վոր ինչպես մինչև հիմա, այնպես ել սրանից հետո՝ հեղափոխության դրոշը բարձր են պահելու և մինչև վերջին հաղթանակը կռվելու են թշնամու դեմ, սովի ու մերկության դեմ։

Մինչև հաղթանակին, մինչև սոցիալիզմին հասնելը։ Ուրեմն պետք ե հետևենք Լենինի տված խրատներին և մեր արդյունաբերությունը բարձրացնենք, մեր գյուղացու տնտեսությունը բարձրացնենք, հարստացնենք, ու ստեղծենք չարչիների, սպեկուլյանտների, բուրժույների վրա ահ ու սարսափ տարածող և դեպի կարմիր որերը տանող,

ՈՒԺԵՂ, ԿԱՐՄԻՐ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ։

Ի՞նչպես պետք ե անենք, վոր Լենինի հետ խրատը կատարենք։

Բոլորս պետք ե անդամագրվենք կոոպերա-

ռիվին։ Բոլորս պետք է աշխատենք եդ կոոպերատիվը ուժեղացնել—այնքան, վոր նա մեր շահերը պաշտպանի, մեզ համար քաղաքից, ֆաբրիկայից լավ և եժան ապրանք բերի, չարչու աչքը հանի, կոտր քցի ու գյուղից դուրս քշի։

Այն ժամանակ է կոոպերացիան լավ, ասել է ընկ. Լենինը, **յերբ նրան մասնակցում են, իրապես,** այսինքն գործով և վոչ թե խոսքով, **բնակչության լայն խավերը,** այսինքն թե, բոլոր աշխատավորները։

Կոոպերացիային պետությունը պետք է ոգնի վարկով, եժան ու լավ ապրանք պետք է բաց թողնի, բանկերից պետք է պարտք բաց թողնի կոոպերատիվներին՝ առևտուրը մեծացնելու համար. և ամեն կերպ պետք է աջակցի, վոր կոոպերատիվը հաջողություն ունենա։

Այդպես է պատվիրել Լենինը, և մենք տեսնում ենք, վոր պետությունը իսկապես մեծ չափերով ոգնություն է հասնում կոոպերացիային։

Բայց մենք բոլորս էլ գիտենք, վոր մեր պետությունը դեռ ենքան չի հարստացել, վոր իր հազարավոր հոգսերը լի ու լի քաշի։ Համ արդյունաբերությանը ոգնի, համ գյուղատնտեսությանը, համ լուսավորության գործը առաջ տանի, առողջապահության վրա ծախսեր անի

և վերջապես կոոպերացիային էլ ոգնություն դա։ Եդ բոլորը նա անում է, բայց այնքան, վորքան ուժերը ներում են։ Պատերազմներից քայքայված յերկիրը սովից ու քայքայումից եսքան կարճ ժամանակում ազատելն ու եդքան շատ հոգսեր քաշելը հեշտ բան չէ։

Եդ բանը լավ հասկանալով, մենք իրավունք չունենք մեր հույսերը մենակ պետության ոգնության վրա դնելու և դեպի մեր սեպհական կոոպերատիվը մեր պարտականությունը չպետք է մոռանանք։

Մենք ինքներս պետք է մեր միջոցով մեր ուժերով, մեր փայավճարներով կոոպերատիվը ուժեղացնենք և հեռևենք. ես մեկը լավ հիշեք, վոր նա վնաս չանի, վատ ու անձեռնտու առևտուր չանի, կոտր չընկնի և թե մեզ վնաս հասցնի, թե ինքը խայտառակվի։ Եսքանը քեզ ասացի՝ գլուխդ ինչ ցավացնեմ։ Շատ բան կարելի յե ասել կոոպերացիայի մասին, բայց ինձ թվում է, ավելորդ է, քանի վոր դու շատ լավ գիտես կոոպերատիվի նշանակությունը, նրա տված ոգուտը և թե ինչ ոգուտներ դեռ պետք է տա նա։

Դու եդ բոլորը լավ գիտես, և յեթե չես անդամագրվել կոոպերատիվին, դա քո մեղքն է։

Յեթե ձեր գյուղում կոոպերատիվ չկա, ձեր

հարևան գյուղորանքումն ել չկա—եդ դեպքում պետք է մտածել կոոպերատիվ բացելու մասին. գյուղխորհրդի միջոցով, պետք է դիմել գործը իմացող մարդկանց, որ գան, ոգնեն կոոպերատիվ կազմակերպելու գործին։

Իսկ յեթե կա ձեր գյուղում կոոպերատիվ և

ԴՈՒ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՆԴԱՄ ՉԵՍ՝

Մի լավ մտածիր, թե ինչ մեծ հանցանք ես կատարել։

Հիշիր ընկեր Լենինի խոսքերը. տես, թե ինչպես ես յեկել, յեկել ու կես ճանապարհին կանգնել,—հեղափոխության գործը մինչև վերջը հասցնելու գործում, քո պարտքը չես կատարում, նահանջում ես, կռվի դաշտից անլիտակցաբար փախչում ես. չարչիներին, քո թշնամիներին ոգնում ես

ՀԱՆՑԱՆՔ ԵՍ ԳՈՐԾՈՒՄ.

Քո հարևանին, բարեկամին, յեղբորը, որ կոոպերատիվի անդամներ են, Լենինի ցույց տված ճանապարհովն են գնում, որ շ բունակում են սկսած պայքարը,

ԴՈՒ ՉԵՍ ՈԳՆՈՒՄ.

Քո յերեխաները որ մեծանան՝ ինչ պիտի ասեն, չեն հարցնի թե. ինչո. չես մասնակցել կոոպերատիվին, գյուղացիության այդ ընկերական գործին, որպեսզի մենք այսոր լավ ապրեյինք, կարմիր որեր տեսնեինք

ԻՆՉ ԿՊԱՏԱՍԽԱՆԵՍ ԴՈՒ.

Գյուղը բարձրացել գերան է կոտրում,

ԻՍԿ ԴՈ՞Ի

Կանգնել ես, ձեռքդ չերուժդ դրել, կարծես ընկեր չես, աշխատավոր գյուղացի չես—

ԲԱ ԴԱ ՀԱՆՑԱՆՔ ՉԵ՞։

Յեթե դու իսկապես հասկացել ես կոոպերացիայի նշանակությունը, յեթե վորոշել ես լսել Լենինի խոսքերը՝

ՇՏԱՊԻՐ, ԳՆԱ ԱՆԴԱՄԱԳՐՎԻՐ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ



II

Իսկ յեթե դու—

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՆԴԱՄ ԵՍ

և չես կատարում քո պարտականութիւնները,—

ԴՈՒ ԱՎԵԼԻ ԵՍ ՀԱՆՑԱՎՈՐ։

Ինչո՞ւ։

Վորովհետև շնորհիվ նրան, վոր դու չես կատարում քո պարտականութիւնները, կոոպերատիվը վատ է աշխատում, թույլ է, վնասներ է անում. թանգ է ծախում ապրանքը, վատ ու անպետք ապրանքներ է բերում գյուղի համար։

Յեվ այդ տեսնելով՝ քո հարեվանները գզվում են կոոպերատիվից, չեն հավատում նրան ու չեն անդամագրվում։

Մեղավորը դու ես։

Վորովհետև, յեթե կոոպերատիվը վատ է, ուրեմն, կոոպերատիվի անդամներն են վատ—դու ես վատ։

Ո՞վ է մեղավոր, վոր կոոպերատիվը աղfաս է։

Դե իմարկե դու և քո ընկերը։

Վորովհետև, յեթե դուք բոլորդ ժամանակին և լիովին մտցնեք ձեր փայավճարը,—

կոոպերատիվի դրամագլուխը, այսինքն առևտուր անելու միջոցները մեծ կլինեն։

Յեթե կոոպերատիվի դրամագլուխը մեծ լինի, նրան բանկերը և առևտրական հաստարկները հավատ կընձայեն և վարկ շատ բաց կթողնեն։

Յեթե կոոպերատիվը փոքրը դրամագլուխ ունենա, նա քիչ վարկ կստանա, կամ վոչինչ չի ստանա։

Տես, թե վորքան վատ է լինում քիչ փող ունեցող կոոպերատիվը։

Կոոպերատիվից մարդ եք ուղարկում քաղաք, ապրանք առնելու և մի քիչ փող եք տալիս նրան։ Եդ մարդը ճանապարհին ծախսեր է անում.—ձիու կամ յերկաթուղու վարձ, որապահիկ կերակրվելու համար, իջևանատեղի վարձ և հազար ու մի ման մունր ծախսեր, վորոնք բոլորը կոոպերատիվի վզին են ընկնում։ Յետո՝ եդ մարդը քաղաքում ես կողմն է ընկնում են կողմը, սրան նրան խնդրում, վոր վարկ բաց թողնեն։

Նրան հարցնում են, թե վորքան փող է բերել—ասում է վոր շատ քիչ։ Այդ դեպքում նրան վարկ չեն տալիս։

Յես վերևը պատմեցի վոր պետությունը բոլորին չի կարող ոգնել, բոլորին չի կարող

վարկ բաց թողնել։ Չեմ կրկնում—մտածիր, ինքդ կհասկանաս։

Խեղճը ստիպված է լինում կանխիկ վճարել և մի թոփ չիթ վերցնել, մի քանի փութ շաքար, մի քանի կտոր չոր սապոն, լուցկի ու ծխախոտ, ու առանց ամենակարեվոր ապրանքների, համարյա թե դատարկ ձեռքով գյուղ վերադառնալ։ Եդ բերած ապրանքն էլ նա ստիպված է թանգ ծախել, վոր ճանապարհորդության ծախսերը դուրս բերե ու կոոպերատիվը վնաս չտանի։ Ո՞վ է տուժում։ Իհարկե, դու։ Ինչու։ Վորովհետև փայավճարդ չես մտցնում լրիվ։

Ինքդ լավ գիտես, վոր յեթե ապրանք շատ բերվի, ծախսը համեմատաբար քիչ կնստի։ Վորովհետև յեթե ձեր ուղարկած մարդը 100 ռուբլու ապրանք է բերում և վրան գալիս է ծախսած 5 ռուբլին, ապա մի ռուբլուն 5 կոպեկ է գալիս, իսկ յեթե նա գնել է 500 ռուբլու ապրանք, ապա մի ռուբլուն մի կոպեկ ծախս է գալիս։

Են էլ ասեմ, յեթե դու հարուստ կոոպերատիվի անդամ ես՝ չկարծես, թե քո փայավճարը ուշ մտցնելուց կոոպերատիվը չի վնասվում։

Կարող է պատահել, վոր ընդհանուր դրությունը վատանա, առևտրական հիմնարկները

և ֆաբրիկաները ինչպես ասում են քյասադություն զգան, և խիստ կրճատեն վարկերը։

Են ժամանակ քո կոոպերատիվը յեթե սեփական միջոցներ ունի, նեղ դրությունից դուրս կգա, թե չէ՝ անպայման մեծ վնասներ կանի և կտոր կնգնի։

Գնա եդ մասին հարցրու ձեր վարչության անդամներին, նախագահին, քեզ կպատմեն, թե վորքան դժվար է առանց փողի աշխատելը։

Ուրեմն ես բանը լավ իմացիր։

Յեթե կոոպերատիվը աղքատ է, մեղավորը դու ես—

ՄՏՑՐՈՒ ԼՐԻՎ ՓԱՅԱՎՃԱՐԴ

1003
12431

Վորքան շուտ—այնքան լավ, այնքան շուտ վոտքի կկանգնի կոոպերատիվը։ Շտապիր։

Յեթե չքավոր ես՝ դիմիր փոխօգնության, խնդրիր՝ վոր քո փոխարեն մինչև կալը, մտցնի փայավճարդ։ Աշխատիր՝ վոր դու կոոպերատիվին պարտք չլինես, չվնասես դրանով նրան։

Յեթե դու քո այդ պարտականությունը կատարել ես, բարեխիղճորեն, ստիպիր, վոր քո բոլոր ընկերներդ էլ կատարեն, —
մտցնեն փայավճարները։

Կարող է պատահել, վոր բոլոր փայավճարները և գանձված լինին, բայց կոոպերատիվը էլի վատ աշխատի։

Այդ դեպքում ով է մեղավոր,

Յերեվակայիր՝ ելի՛ դու։

Վորովհետև դա կնշանակի, վոր դու անշնորք մարդկանց ես ընտրել վարչության և ստուգիչ հանձնաժողովի մեջ։

Դու շատ վատ բան արած կլինես կոոպերատիվի անդամին անվայել բան, յեթե այստեղ այնտեղ գանգատվես կոոպերատիվից, պախարակես, և քո խորհրդներով, աշխատանքով քո մասնակցությամբ չոգնես կոոպ. վարչությանը։

Վերջի վերջո բավական չե կոոպերատիվին անդամագրվել, փայավճար մացնելը և այնտեղից ապրանք առնելը։

Կոոպերատիվը հո հասարակ խանութ չե, նա հենց նրանով ե կոոպերատիվ, վոր նա ընկերական մի միություն ե, ուր տերը մեկը չե, այլ բոլորն են։

Սովորիր նայել կոոպերատիվի վրա, ինչպես քո սեփականության վրա, ինչպես քո աչքի լույսի վրա և այն ժամանակ կոոպերատիվդ առողջ կլինի, ուժեղ և հարուստ։

Ի հարկե, սխալներ պատահելու յեն, դժվարություններ ել են լինելու։

Չէ՞ վոր մենք առևտրականներ չենք յեղել, դեռ նոր ենք սովորում, և վոչ մի սովորող չի կարող սխալվել։ Բայց մի մարդը ավելի շատ ե

սխալվում, քան թե մի խումբ մարդիկ։

Ուրեմն ոգնիր վարչությանդ, ուղղիր նրա սխալները, խորհուրդներ տուր նրան։

Մի ուրիշ անգամ կպատմեմ քեզ, թե ինչպես մոտ քսան ջուլհակներ Անգլիայում տանջանքներով, զրկանքներով, տարիների ընթացքում մի քիչ փող են հավաքել, ասենք մոտ յերկու հարյուր ռուբլի և կոոպերատիվ հիմնել։ Համառ ու տոկուն ընկերական աշխատանքով նրանք առաջ են տարել իրենց կոոպերատիվը, և այժմ եդ կոոպերատիվը միլիոններ ունի, տներ, ֆաբրիկաններ, կալվածքներ, զարմանալի մեծ հարստության տեր ե։

Հետաքրքիր պատմություն ե դա։

Յուրաքանչյուր կոոպերատիվ կարող ե հարստանալ, հրաշքներ գործել, յեթե նրա անդամների ընկերական կապը, տերը, դեպի կոոպերացիան ուժեղ լինի։

ՅԵԹԵ ԲՈԼՈՐԸ ՀԱՍԿԱՑԱԾ ԼԻՆԵՆ ԼԵՆԻՆԻ ԽՈՍՔԵՐԸ ՈՒ ԿԱՏԱՐԵՆ ՆՐԱ ԱՎԱՆԴՆԵՐԸ

Այն ժամանակ Խորհրդային իշխանության դրոշի տակ, Լենինի ցույց տված ճանապարհով մենք կկարողանանք ստեղծել կոոպերատիվ, ընկերական կյանք, այսինքն հավասարություն, սոցիալիզմի կյանք։

Ընկեր գյուղացիներ, ուժեղացրեք կոոպերացիան։

Անդամագրվեցեք կոոպերատիվին։

Կոոպերատիվի անդամներ, կատարեցեք ձեր պարտականությունները։

Տարեք ձեր կոոպերատիվը դեպի հաղթանակ։



ՀՀ Ազգային գրադարան
NL0193166

ԳԻՆՆԵ 5ԿՈՊ

334
Ֆ-74